Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Տ Ա Վ ՈՒ Շ Ի Մ Ա Ր Զ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մ Ա Ր Զ Խ Ո Ր Հ Ր Դ Ի Ն Ի Ս Տ Ի

23 դեկտեմբերի 2019թ.

Քաղաք Իջևան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

23.12.2019թ. ժ.14^{00}-ին կայացած ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

1. ՀՀ Տավուշի մարզի համայնքների սեփական եկամուտների կատարողականների մասին՝ 2019թ. դեկտեմբերի 20-ի դրությամբ

Զեկուցող՝ Ա.Բաբլումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժ/պ

2. ՀՀ Տավուշի մարզում 2019թ. գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերման արդյունքների ամփոփում

Զեկուցող՝ Վ.Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

3. ՀՀ Տավուշի մարզի համայնքներում 2019թ. իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին

Զեկուցող՝ Ֆ.Ափինյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ

4. 2019թ. սուբվենցիոն և պետական աջակցության ծրագրերի կատարողականի մասին

Զեկուցողներ՝ Տ.Մուշեղյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի ժ/պ
Գ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ

5. 2020թ. Առաջնահերթ ծրագրերի պլանավորման մասին

Զեկուցող՝ Գ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ

6. Համայնքներում ամանորյա միջոցառումների ծրագրերի մասին

Զեկուցող՝ Մ.Ղազումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժ/պ

7. Այլ հարցեր

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 4

ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

Նիստը վարում էր Տավուշի մարզպետ Հ.Զոբանյանը:

Ներկա էին մարզպետի տեղակալը, խորհրդականները, օգնականները, գլխավոր քարտուղարը և նրա տեղակալը, վարչությունների պետերը, բաժինների վարիչները, պատասխանատու մասնագետները, մարզխորհրդի անդամները:

Մարզխորհրդի 24 անդամներից ներկա էին 23-ը:

Ողջույնի խոսքով նիստը բացեց մարզպետ Հ.Զոբանյանը: Նա ներկայացրեց մարզի դատախազի ժ/պ Էդուարդ Հարությունյանին և ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Իջևանի բաժնի պետ Մեսրոպ Հովհաննիսյանին, հույս հայտնելով, որ համատեղ աշխատանքը էլ ավելի արդյունավետ է լինելու: Այնուհետև մարզպետն ամփոփեց 2019 թվականին կատարված աշխատանքները և շեշտը դրեց 2020 թվականին նախատեսված աշխատանքների վրա:

1. ՀՀ Տավուշի մարզի համայնքների սեփական եկամուտների կատարողականների մասին՝ 2019թ. դեկտեմբերի 20-ի դրությամբ

Զեկուցող՝ Ա.Բաբլումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժ/պ

Զեկուցողը ներկայացրեց, որ 2019 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ մարզի համայնքների սեփական եկամուտների փաստացի մուտքը կազմել է 1մլրդ 972.3 մլն. դրամ նախատեսված 1մլրդ 142.6մլն. դրամի դիմաց, կամ կատարվել է 95.0 %-ով: 2018 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտներն ավել են հավաքագրվել 46.6 մլն. դրամով կամ 4,5%-ով:

Սեփական եկամուտների կատարողականների մեջ ցածր կատարողականներ ունեն Խաշթառակ 44.2%, Աչաջուր 83.8%, Կողբ 84.9 %, Գետահովիտ 87.0%, Այրում 90.7%, Դիլիջան 92.1%, Իջևան 92.4 %:

Ընդհանուր առմամբ սեփական եկամուտների թերհավաքագրումը դեկտեմբերի 20-ի դրությամբ կազմում է 83.7 մլն. դրամ, որից Դիլիջան, Իջևան, Այրում, Նոյեմբերյան, Կողբ, Աչաջուր համայնքների մասով թերհավաքագրումը կազմում է մոտ 68.0 մլն. դրամ: Նշված համայնքների կողմից սեփական եկամուտների 100% կատարման դեպքում մարզի սեփական եկամուտները կկատարվեն ամբողջությամբ:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների կատարողականները ս/թ դեկտեմբերի 20-ի դրությամբ հետևյալն է.

- հողի հարկ – տարեկան 190.7 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 174.8 մլն. դրամ կամ կատարվել է 91.7 % - ով, որը 2018 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 12.1 մլն. դրամով:

Հողի հարկի մասով ցածր կատարողական ունեցող համայնքներն են՝ Աչաջուր 58.7 %, Իջևան 63.8 %, Խաշթառակ 69.7 %, Դիլիջան 78.1 %, Այրում 82.6 %:

- գույքահարկ - տարեկան նախատեսված 413.7 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 406.5 մլն. դրամ կամ կատարվել է 98.3 %-ով, որը 2018 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելի է 41.2 մլն. դրամով:

Գույքահարկի մասով ցածր կատարողական ունեն հետևյալ համայնքները՝ Խաշթառակ 55.1 %, Վազաշեն 70.1 %, Գետահովիտ 68.1 %, Աչաջուր 81.2 %, Կողբ 89.9 %:

-տեղական տուրքեր – տարեկան նախատեսված 48.6 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 40.3 մլն. դրամ կամ կատարվել է 82.9 %-ով, որը 2018 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 4.7 մլն. դրամով,

Տեղական տուրքերի մասով ցածր կատարողական ունեն հետևյալ համայնքները՝ Դիլիջան 70.3 %, Աչաջուր 50.3 %, Իջևան 91.3 %:

- գույքի վարձակալությունից եկամուտներ – տարեկան նախատեսված 106.7 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 97.7 մլն. դրամ կամ կատարվել է 91.6 %-ով, որը 2018 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 6.4 մլն. դրամով,

Գույքի վարձակալությունից եկամուտների մասով ցածր կատարողական ունեցող համայնքներն են՝ Աչաջուր 38.8 %, Կողբ 45.1 %, Սևքար 56.3 %, Բերդ 86.2 %:

- տեղական վճարներ – տարեկան նախատեսված 315.8 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 296.1 մլն. դրամ կամ կատարվել է 93.8 %-ով, որը 2018 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելի է 10.0 մլն. դրամով:

Տեղական վճարների մասով ցածր կատարողական ունեն հետևյալ համայնքները՝ Այրում 68.8%, Կողբ 82.3 %, Իջևան 91.1 %, Դիլիջան 91.7 %:

Ավարտելով իր զեկույցը, Ա.Բաբլումյանը նշեց, որ տարեվերջին հաշված օրեր են մնացել և ցածր կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին առաջարկվում է կտրուկ միջոցներ ձեռնարկել 2019 թվականի տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտներն ամբողջությամբ հավաքագրելու ուղղությամբ:

<u>Առաջարկվեց.</u>

Համայնքների ղեկավարներին.

- Կտրուկ միջոցներ ձեռնարկել 2019 թվականի տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտներն ամբողջությամբ հավաքագրելու ուղղությամբ:

2. ՀՀ Տավուշի մարզում 2019թ. գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերման արդյունքների ամփոփում

/Զեկուցող՝ Վ.Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզի գյուղատնտեսության նշանակության հողատեսքերը կազմում են 110762.8 հա, որից՝

վարելահող	-25588.4 հա
բազմամյա տնկարկներ	- 1902.2 հա, որից՝
խաղողի այգիներ	- 1198.1հա,
պտղատու այգիներ	- 704.1 հա
խոտհարքներ	- 9401.3 հա
արոտավայրեր	- 63065.6 հա
այլ	- 10805.4 հա
Բացի վերը նշվածը տնամերձերում ևս կան	
բազմամյա տնկարկներ	- 2030.8 հա, որից՝
խաղողի այգիներ	- 158.9 հա,
պտղատու այգիներ	- 1871.9 հա

25588.4հա վարելահողից 7210.7 հա պատերազմական գործողությունների պատճառով չի մշակվում: Նախնական տվյալներով 18377.7 հա փաստացի վարելահողից 2019թ. ցանքի տակ է դրվել 7663 հա՝ նախորդ տարվա 7503 հա-ի դիմաց /+160 հա/ :

Նախնական տվյալներով 2019թ.արտադրվել է . հացահատիկ, հատիկաընդեղեն – 6816 տոննա /2018թ. 10586 տոննա/, բանջարեղեն – 4631 տոննա /5914 տոննա/, բոստան – 427 տոննա /782 տոննա/, կարտոֆիլ – 5018 տոննա /13623 տոննա/,պտուղ – 9652 տոննա /9206 տոննա/, խաղող – 11199 տոննա /9914 տոննա/, ծխախոտ – 352 տոննա /430 տոննա/, արևածաղիկ – 15 տոննա /303 տոննա/, խոտ – 32098տոննա /51142 տոննա/, ծղոտ – 1393 տոննա /629 տոննա/:

Ժամանակին և անկորուստ կատարվեց խաղողի բերքահավաքը: Արտադրված 11199 տոննայից 1կգ-ը 150-170 դրամով մթերվեց 6869 տոննա խաղող /+1133 տոննա 2018թ.նկատմամբ/, այդ թվում՝ <<Երևանի կոնյակի գործարան>> ՓԲԸ Բերդի մասնաճյուղ – 4231 տոննա, <<Երևանի շամպայն գինիների գործարան>> ԲԲԸ Դեբեդավանի գինու գործարան-1404 տոննա, <<Իջևանի գինու և կոնյակի գործարան>> ԲԲԸ – 1022 տոննա,

<<Բերդավանի գինու գործարան>> ԲԲԸ – 62 տոննա, <<Էկոգարդեն>> ՍՊԸ - 150 տոննա :

Մարզի վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է 773.4 տոննա պտուղ և հատապտուղ ու բանջարեղեն /2018թ. 934.3 տոննա/, որից՝ Իջևանի գինու, կոնյակի գործարան ԲԲԸ - 360.1 տոննա, <<Էկոգարդեն>> ՍՊԸ /գ.Այգեձոր/ - 324.3 տոննա, <<Արթուր և Էդիտա>> ՍՊԸ /գ.Ջուջևան/ - 4.0 տոննա, <<Բերդավանի գինու գործարան>> ԲԲԸ – 85.0 տոննա:

Բացի մթերումները շուրջ 456 տ պտղից չիր է պատրաստվել: Շուրջ 900 տոննա դեղձ, արքայանարինջ, թուզ, հոն, ելակ է արտահանվել արտերկիր:

2019թ.աշնանը մարզում ըստ օպերատիվ տվյալների կատարվել է շուրջ 3200 հա աշնանացան,2018թ.4145 հա-ի դիմաց:

Մոնիթորինգի արդյունքներով 2019թ. աշնանը մարզի 21 համայնքների և բնակավայրերի հատկացվել է 358 լիտր <<Բրոմադիալոն>> մկնասպան թունանյութ պատրաստուկ՝ առավել վարակված 4474 հա-ի վրա պայքարի աշխատանքներ կատարելու համար:

2019թ. մայիսի 10-ին, 20-ին, հունիսի 20-ին, հուլիսի 11-ին և 17-ին կարկտահարությունների, հորդառատ անձրևների և հեղեղաջրերի հետևանքով տուժել են մարզի 24 համայնքների և բնակավայրերի 4744 գյուղացիական տնտեսությունների 1178 հա ցանքատարածություններ և բազմամյա տնկարկներ: Մարզային հանձնաժողովի կողմից կազմվել են ամփոփ ակտեր և սահմանված կարգով ներկայացվել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, էկոնոմիկայի նախարարություններ:

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզպետարաններին Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից գումար հատկացնելու և 2019 թվականին տարերային աղետների հետևանքով պատճառված վնասների մասնակի փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1835-Ն որոշմամբ Տավուշի մարզին տրամադրվել է 17.744 մլն.դրամ: Ընթացքի մեջ են համայնքներում և բնակավայրերում համապատասխան ցուցակների կազմման աշխատանքները:

Մարզում կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ է: Պետպատվերի շրջանակներում հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներն իրականացվում են ըստ ժամանակացույցի:

Մարզի համայնքներում առկա են շահագործվող կամ շահագործման ենթակա 753 տրակտոր, 46 հացահատիկահավաք կոմբայն, 209 գութան, 87 շարքացան, 141 տրակտորային խոտհավաք,183 տրակտորային խոտհնձիչ,161 ձեռքի խոտհնձիչ, 102 հավաքիչ մամլիչ և այլ մեքենասարքավորումներ:

Զեկույցից հետո մարզպետը նշեց, որ գյուղատնտեսության ոլորտում շեշտը պետք է դնել պտղաբուծության վրա, մարզում արդյունավետ գյուղատնտեսություն ունենալու համար պետք է ջանքեր գործադրվեն այդ ենթակառուցվածքների ավելացման ու զարգացման ուղղությամբ: Դա վերաբերվում է նաև ոռոգման համակարգերին, տարբեր պտղատեսակների այգիների հիմնմանը, գոյություն ունեցող, բայց արդեն ծերացած այգիների փոփոխմանը նոր, ինտենսիվ այգիներով, դպրոցներին հարակից տարածքներում պտղատու այգիների հիմնելուն: Մարզպետը նշեց, որ այս տարի պտղաբուծության առումով բավականին առաջընթաց ենք ունեցել:

Հ.Զոբանյանը խոսեց նաև մարզի բնապահպանական խնդիրների մասին, հատկապես անտառհատումների և հրդեհների, ներկայացրեց ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի նորանշանակ պետին՝ Ռ.Գուլակյանին, նշելով, որ նա ներգրավված է բնապահպանական բոլոր աշխատանքների մեջ: Կոչ արեց համայնքների ղեկավարներին առավել ուշադիր լինել անտառներում հրդեհների բռնկման հարցում:

3. ՀՀ Տավուշի մարզի համայնքներում 2019թ. իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին

/Զեկ.՝ Ֆ.Ափինյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ/

Զեկուցողը ներկայացրեց, որ տեղական ինքնակառավարման մարմիններում իրավական և մասնագիտական հսկողության իրականացումը «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով պատվիրակված է պետական լիազոր մարմնին՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, և որի հրամանով այդ լիազորությունները ինչպես գիտենք վերապահված են մարզպետարաններին: Հսկողության իրականացնելու նպատակով հարցաշարերը կազմվում են համապատասխան ոլորտների պետական լիազոր մարմինների կողմից, որոնք միաժամանակ հաստատվում են իրենց ու ՏԿԵ նախարարի համատեղ հրամանով:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95.1 և 95.2 հոդվածների պահանջների կատարման կարգը և ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 21.12.2018թ. «Իրավական և մասնագիտական հսկողության 2019թ. աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 364-Ա հրամանով, ինչպես նաև ՀՀ Տավուշի մարզպետի 2019 թվականի 4 եռամսյակների համար կայացված համապատասխան որոշումներով /31.01.2019թ. թիվ 8-Ա, 21.05.2019թ. թիվ 66-Ա, 02.07.2019թ. թիվ 89-Ա, 27.09.2019թ. թիվ 127-Ա/, մարզպետարանը հաստատված բնագավառներում և ժամանակահատվածում իրականացրել է նախատեսված իրավական և մասնագիտական հսկողություն մարզի 6՝ Սարիգյուղ, Ծաղկավան, Բերքաբեր, Կողբ, Այրում ու Դիլիջան համայնքների ղեկավարների ու ավագանիների կողմից իրականացված՝ սեփական, պատվիրակված ու կամավոր լիազորությունների կատարման նկատմամբ:

Իրականացված հսկողությունների արդյունքների վերաբերյալ սահմանված կարգով կազմվել են համապատասխան արձանագրություններ և հսկողության արդյունքները

տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքէջում, ինպես նաև տրամադրվել է ՀՀ ՏԿԵՆ-ը:

Իրականացված հսկողության արդյունքում, ըստ ոլորտների բացահայտված թերությունների մի մասը տեղում վերացվել են, իսկ թերությունների վերացման համար ժամկետներ պահանջող խնդիրները ՏԿՆ կողից սահմանված ձևաչափով ներկայացվել են համայնքապետարան, տրվել են ժամկետներ, որոնց ընթացքում վերացվել են սահմանված կարգով:

Հսկողություն իրականացնող մարզպետարանի մասնագետների ներկայացմամբ բոլոր համայնքներում հայտնաբերվել են նույնատիպ խախտումներ՝ ֆինանսների, հողաշինության, քաղաքաշինության, ՏԻՄ և մյուս բնագավառներում:

Օրինակ՝ բյուջեի կատարման ընթացքի մասին եռամսյակային հաղորդումների ներկայացման, ամենամյա գույքագրման ցուցակների հաստատման ու գույքագրման փաստաթղթերում փոփոխություններ կատարման, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանված ժամկետներում հաստատման և դրանց հաշվառման, հողի հարկի և գույքահարկի եկամուտների վաճարումների մուտքագրման, տարեկան ֆինանսական հաշվետվությունների կազմման, գործավարության կարգերի, տարբեր տեսակի կադաստրների վարման /քաղաքաշինական, բնապահպանական և այլն/, համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների սահմանման, համայնքապետարանների աշխատակազմերի կադրային գործի վարման, համայնքային ծառայության գործառույթների:

Հիմնականում հայտնաբերված թերությունները համապատասխան ժամկետներում վերացվում են և մենք հետևողական ենք լինում դրանց հետագայում չկրկնվելու հարցում:

Զեկուցողը նշեց նաև, որ որոշ լիազորությունների, գործառույթների իրականացումը այսօր կապվում է ֆինանսական միջոցների բացակայության, կամ դրանց բավարար չլինելու խնդրների հետ: Սակայն այսօր արդեն ստեղծված է բոլոր հնարավորությունները աշխատանքները արդյունավետ կազմակերպելու, հավաքագրումները ապահովելու, տնտեսական գործունեություն նախաձեռնողների ծրագրերին աջակցելու և ունենալու արդյունքում անհրաժեշտ բյուջե:

Ֆ.Ափինյանը դիմելով համայնքների ղեկավարներին, նշեց, որ թերությունները, բացթողումները կապված են նաև նրանց մասնագետների ոչ պրոֆեսիոնալ լինելու, անուշադրության, երբեմն՝ անպարտաճանաչության հետ: Նա առաջարկեց այսուհետ վարչական հսկողության արդյունքում հայտնաբերված բացթողումներ ունեցող աշխատակիցներին ենթարկել կարգապահական տույժերի, որը անպայման դրական արդյունք կունենա:

Զեկուցողը տեղեկացրեց, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանով մոտ օրերս ուժը կորցրած կճանաչվի ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի մարտի 3-ի <<Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը հաստատելու մասին>> թիվ 11-Ն հրամանը: Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների նկատմամբ

իրականացվող իրավական և մասնագիտական հսկողությունը 2020 թվականում կիրականացվեն նոր հարցաշարերի հիման վրա, որտեղ ընդգրկված են ՏԻ մարմինների բոլոր լիազորությունները:

Ավարտելով իր զեկույցը, Ֆ.Ափինյանը նշեց, որ մարզպետարանի կողմից արդեն ՏԿԵՆ են ներկայացված համայնքների ցանկն ու ժամանակացույցը՝ 2020թ իրավական և մասնագիտական հսկողությունների վերաբերյալ և նախարարի կողմից հաստատվելուց հետո մարզպետի համապատասխան որոշումներով կունենանք իրականացվելիք հսկողության բնագավառները և ժամանակահատվածները:

<u>Հանձնարարվեց.</u>

ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ Ֆ.Ափինյանին.

- Ներկայացնել տեղեկանք՝ համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքում ի հայտ եկած թերությունների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

4. 2019թ. սուբվենցիոն և պետական աջակցության ծրագրերի կատարողականի մասին

/Զեկուցող՝ Տ.Մուշեղյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի ժ/պ /

Զեկուցողը ներկայացրեց, որ 2019թ-ին մարզում պետական բյուջեի, համայնքային բյուջեների միջոցներով կրթության, մշակույթի, ջրամատակարարման, բնակարանաշինության, և ճանապարհաշինության բնագավառներում իրականացվել են 1332,5 մլն դրամի կապիտալ ներդրումներ:

2018թ-2019թ. ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդի հաշվին «Հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներ»-ի ծրագրերով 2019թ Տավուշի մարզում իրակացվել է 561.2 մլն դրամի շինարարական աշխատանքներ՝ վերանորոգվել է 5 կրթական հաստատություն՝ 2 հանրակրթական դպրոց, 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն, 1 երաժշտական դպրոց և 1 արվեստի դպրոց , 12 ջրագիծ՝ 10 խմելու ջուր և 2 ոռոգման համակարգ, 4 ճանապարհաշինական՝ 3 ճանապարհների վերանորոգում և 1 գիշերային լուսավորություն, 4 այլ օբյեկտներ:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացված աշխատանքներից 106.7 մլն. դրամը ծախսվել է կրթական օբյեկտների վերանորոգման, 365 մլն դրամը՝ ջրագծերի, 41.0 մլն դրամը՝ ճանապարաշինության և այլ օբյեկտներ՝ 48.5 մլն. դրամ:

«Հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներ»-ից Բերքաբերի ոռոգման համակարգի վերակառուցման /7մլն դրամի/ և Բաղանիս, Ջուջևան, Դովեղ, Ոսկեվան, Բարեկամավան, Կոթի խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի հիմնանորոգման, խորքային հորերի և ՕԿՋ-հիմնանորոգման և կառուցման /15,0 մլն.դրամի/ աշխատանքները կավարտվեն 2020թ:

ՀՀ վարչապետի 2019 թվականի մարտի 19-ի թիվ 278-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից հավանության արժանացած սուբվենցիայի ծրագրերով

նախատեսվել է իրականացնել 1235.3 մլն.դրամի աշխատանքներ, որից իրականացվել 771.3 մլն դրամի շինարարական աշխատանքներ՝ վերանորոգվել է 2 կրթական հաստատություն՝ Դիլիջանի 1 և 2-րդ մանկապարտեզները, 3 ջրագիծ՝ 1 խմելու ջուր և 2 ոռոգման համակարգ, 10 ճանապարհաշինական՝ 7 ճանապարհների վերանորոգում, 2 գիշերային լուսավորություն և 1 հենապատի վերակառուցման և արտաքին կոյուղագծի կառուցման աշխատանքներ և 4 այլ օբյեկտներ /հավելված 2/ : 464,0 մլն, դրամի ճանապարաշինական աշխատանքները եղանակի պատճառով դադարեցվել է և կիրականացվի 2020թ –ին:

ՀՀ Տավուշի մարզում 25 համայնք գտնվում է սողանքային գոտում: Վերջին տարիներին սողանքը մեծ վնաս է հասցրել մարզի բնակֆոնդին և ինժեներատեխնիկական կառուցվածքներին: 1997թ. <<Հայսեյսմշին>> ՓԲԸ-ի և 2005թ.<<Կառուցապատում և սպասարկում ԳԱԿ>> ՓԲԸ-ի կողմից կատարվել են ուսումնասիրություններ՝ թվով 9 համայնքների մեկական թաղամասերում: Սակայն այդ ուսումնասիրություններն ակնհայտորեն բավարար չեն: Մարզի տարածքում գարնանային տեղումների հետևանքով ակտիվացել են սողանքային երևույթները և ունեն կրկին ուսումնասիրության կարիք, որի համար առաջարկություն է ներկայացվել կառավարություն և ներկայացվել է ՀՀ Տավուշի մարզպետարանի 2019-2021թթ. ՄԾԾ-ում:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

5. 2020թ. Առաջնահերթ ծրագրերի պլանավորման մասին

/Զեկուցող՝ Գ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ/

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզում 2020 թ. առաջնահերթ ծրագրերի պլանավորման նպատակով համապատասխան շրջաբերականներ է ուղարկվել համայնքներին: Համայնքներում առկա հիմնախնդիրները ըստ առաջնահերթության ներկայացվել է մարզպետարան, որոնք դասակարգվել են ըստ ոլորտների և ըստ հնարավոր լուծման ուղղիների:

Ներկայացված հիմանախանդիրների ընդհանուր թիվը կազմում է 255, լուծման համար պահանջվող ֆինանսական ծավալը՝ ավելի քան 20.5 մլրդ.դրամ:

Նշված հիմնախնդիրներից շուրջ 2.5 մլրդ դրամի աշխատանքներ համայնքների կողմից նախատեսվում է իրականացնել 2020թ. սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, իսկ մնացած մասը մարզպետարանի կողմից պլանավորվում է ներկայացնել միջնաժամկետ ծախսային ծրագրերում, ինչպես նաև քննարկել և հնարավորության դեպքում ներառել 2020թ. հրատապ լուծում պահանջող ծրագրերի ցանկում:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

6. Համայնքներում ամանորյա միջոցառումների ծրագրերի մասին

/Զեկուցող՝ Մ.Ղազումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժ/պ/

Ողջունելով ներկաներին Մ.Ղազումյանը նշեց, որ 2019 թվականը բուռն և հագեցած տարի էր մշակութային միջոցառումների, հին ու նոր փառատոնների, ստեղծագործական աշխատանքների թվով ու որակով: Այս տարի ևս առավել մեծ հաջողությամբ կայացան արդեն սիրված և ընդունված «Շամշադինի Մեղրի և հատապտուղների փառատոնը», Հաղարծնի շաբաթը, Դիլիջանի Արվեստի և արհեստի «Մշակութային վերածնունդ» փառատոնը, «Հայ բույս» փառատոնը, Զուռնայի փառատոնը Այգեձորում: Միևնույն ժամանակ առաջին անգամ կայացան Կողբի մրգօղու փառատոնը, Մովսեսի «Հացի տուն» փառատոնը, Հայաստանի նկարիչների միության Տավուշի մասնաճյուղի տնօրեն Արմինե Թումանյանի նախաձեռնությամբ աշխարհի 17 երկրների 23 նկարիչների մասնակցությամբ անցկացվեց նկարչական սիմպոզիում: Այս փառատոնները ևս հավակնում են դառնալ ավանդական: Այս բոլոր միջոցառումները առավել ներկայանալի են դարձնում Տավուշը, ինչը նպաստում է մարզի զարգացմանը բոլոր բնագավառներում: Բացի նշված փառատոններից, 2019թվականին մարզպետարանի նախաձեռնությամբ կայացել են մի շարք միջոցառումներ՝ «Գարնանային զարթոնք», «Վարդավառ», «Կոմիտաս 150», կազմակերպվել են մի շարք համերգներ՝ մայրաքաղաքից ժամանած խմբերի, հայտնի կոմպոզիտորների մասնակցությամբ: Մարզի աշակերտները, ուսուցիչները բազմիցս մասնակցել են մայրաքաղաքում կազմակերպված մշակութային միջոցառումներին: Այս ամենի մեջ, անկասկած, իրենց ներդրումն ունեն համայնքների ղեկավարները, ավագանին, ովքեր տարբեր առիթներով աջակցել են, որպեսզի միջոցառումները կայանան հավուր պատշաճի: Զեկուցողը իր շնորհակալությունը հայտնեց աջակցող համայնքապետերին, նշելով,որ սա մեր միասնական աշխատանքն է, և միայն համագործակցված աշխատանքով մանկապարտեզը, դպրոցը, մշակույթի տունը, գրադարանը, սպորտդպրոցը բոլորինս համարելով, կարող ենք հասնել ցանկալի արդյունքի:

Զեկուցողն անդրադարձավ նաև ամանորյա միջոցառումներին, նշելով, որ համայնքներում դեկտեմբերի 20-30-ը տեղի կունենան ուրախ համերգային միջոցառումներ, որոնք կեզրափակվեն դեկտեմբերի 30-ին՝ Բերդ քաղաքի կենտրոնական հրապարակում մեծ համերգային ծրագրով: Նոյեմբերյանի Մշակույթի կենտրոնի և համայնքապետարանի նախաձեռնությամբ մշակույթի կենտրոնի դերասանները և երաժշտական խմբերը շրջում են համայնքի բանկավայրերում՝ ներկայացնելով գեղեցիկ համերգային ծրագրեր: Կոթի, Բաղանիս, Ոսկևան, Նոյեմբերյան բնակավայրերում դեկտեմբերի 31-ին նախատեսվում է տոնական հրավառություն: Բերդավանում դեկտեմբերի 30-ին նախատեսվում է մեծ

համերգային ծրագիր և հրավառություն: Դեկտեմբերի 30-ին Նոյեմբերյանի մշակույթի կենտրոնում նախատեսվում է ամանորյա ցուցահանդես:

Դիլիջան քաղաքում դեկտեմբերի 27-ին, ժամը 17.00-ին նախատեսվում է մեծ տոնական համերգ՝ Երևանից հրավիրված երգիչ-երաժիշտների մասնակցությամբ: Վերջում կլինի հրավառություն:

Իջևանի տարածաշրջանի համայնքներում դեկտեմբերի 26-ից սկսած կազմակերպվելու են տոնական միջոցառումներ: Ցանկանում եմ առանձնացնել Կիրանցի համայնքապետարանի նախաձեռնությունը. համայնքի թոշակառուներին և գյուղի սահմանում կանգնած զինվորներին կհանձնվեն նվերներ: Մեծ համերգային ծրագիրը, Իջևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ, կլինի դեկտեմբերի 30-ին, ժամը 19.00-ին: Կմասնակցեն տեղի և մայրաքաղաքի երաժշտական համույթները և երգիչները:

Նախատոնական միջոցառումներ են կազմակերպվել բոլոր դպրոցներում և մանկապարտեզներում, 1-4-րդ դասարանների աշակերտներին և մանկապարտեզների սաներին համայնքապետարանների կողմից հանձնվել են նվերներ:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

ՄԱՐԶՊԵՏ **Հ.ՉՈԲԱՆՅԱՆ**

30.12.2019

X

Արձանագրեց՝ Տ.Անտոնյանը